

**Կենսաբանություն, ԳՊՐՈՑԱԿԱՆ ՓՈԻԼ**  
**տևողությունը 60 րոպե**  
**11-12-րդ դասարաններ**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք **միայն մեկը**, որն, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Կարտոֆիլի պալարը առաջանում է.**

- 1) Կողմնային արմատների վրա
- 2) Ստոլոնների վրա
- 3) Հավելյալ արմատների վրա
- 4) Բույսի այլ մասերի վրա

**2. Մթնոլորտի օզոնային շերտը**

- 1) պատնեշում է Երկրի ջերմային ճառագայթումը
- 2) պաշտպանում է Երկիրը ուլտրամանուշակագույն ճառագայթներից
- 3) առաջացել է արդյունաբերական աղտոտման արդյունքում
- 4) նպաստում է աղտոտիչների քայքայմանը

**3. Մայիսյան բզեզի աղիքներից դուրս են գալիս բարակ երկար կույր փակված խողովակներ, որոնց անվանում են.**

- 1) տրախեաներ
- 2) մալպիգյան անոթներ
- 3) խոզաններ
- 4) պիլորիկ հավելվածներ

**4. Մարդու օրգանիզմում հակամարմինները ներկայացված են.**

- 1) թրոմբոցիտներով
- 2) գլոբուլիններով
- 3) ալբումիններով
- 4) ֆիբրինոգենով

**5. Մարդու աչքերի գույնը որոշվում է աուտոսոմ գենով, իսկ դալտոնիզմը պայմանավորած է սեռի հետ շղթայակցված ռեցեսիվ գենով: Որոշեք շագանակագույն աչքերով և նորմալ տեսողությամբ կնոջ գենոտիպը, որի հայրը դալտոնիկ է (շագանակագույն աչքերը դոմինանտ են կապույտ աչքերի նկատմամբ)**

- 1)  $AA X^D X^D$
- 2)  $Aa X^D X^d$
- 3)  $Aa X^d X^d$
- 4)  $aa X^D X^d$

**6. Մամռանմաններին հաջողվեց գոյատևել ցամաքի վրա, քանի որ.**

- 1) նրանք առաջին բույսերն էին, որոնք ունեին հերձանցք
- 2) նրանց հարկավոր չէ խոնավ միջավայր ռեպրոդուկտիվ ցիկլի համար
- 3) նրանք աճում են համեմատաբար խոնավ շրջաններում՝ շատ քիչ բարձրանալով հողից վեր
- 4) սպորոֆիտը դարձավ անկախ գամետոֆիտից

**7. Ստորև բերված ամինաթթուներից սպիտակուցների կազմում ո՞րը կարող է ֆոսֆորիլացվել պրոտեինկինազներով**

- 1) լեյցինը
- 2) տրիպտոֆանը
- 3) տրեոնինը
- 4) վալինը

**8. Պտղաբույլը բնորոշ է .**

- 1) տանձին
- 2) արքայախնձորին (անանաս)
- 3) բանանին
- 4) սեկևիլին

**9. Միջատների սիրտը.**

- 1) միախորշ է
- 2) երկխորշ է
- 3) քառախորշ է
- 4) խողովակաձև է

**10. Կասպագոնները ֆերմենտներ են, որոնք օժտված են**

- 1) պրոտեազային ակտիվությամբ
- 2) նուկլեազային ակտիվությամբ
- 3) գլիկոզիդազային ակտիվությամբ
- 4) վերը նշված ակտիվություններից ոչ մեկով

**11. Ողնաշարավոր կենդանիների էվոլյուցիայի ընթացքում թքագեղձերն առաջին անգամ ի հայտ են եկել**

- 1) երկշունչ ձկների մոտ
- 2) երկկենցաղների մոտ
- 3) սողունների մոտ
- 4) կաթնասունների մոտ

**12. Կորայան պոլիպների մարտոդությունը**

- 1) Միայն խոռոչային է
- 2) Միայն ներբջջային է
- 3) Խոռոչային է և ներբջջային
- 4) Խոռոչային է , ներբջջայինն արտաքին

**13.Ֆոտոսինթեզի ընթացքում թթվածնի աղբյուր է հանդիսանում.**

- 1) ռիբուլոզոբիֆոսֆատը
- 2) գլյուկոզը
- 3) ջուրը
- 4) ածխաթթու գազը

**14. Ո՞ր ամինաթթվի կազմի մեջ է մտնում ծծումբ**

- 1) սերին
- 2) հիստիդին
- 3) մեթիոնին
- 4) տրիպտոֆան

**15. Ստորև բերված հիվանդություններից որի՞ հարուցիչն է վիրուս**

- 1) խոլերա
- 2) սև ծաղիկ
- 3) ժանտախտ
- 4) մալարիա

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

**16. Քանի՞ մոլեկուլ ԱԵՖ է պահեստվում բակտերիայի բջջում կաթնաթթվային խմորման ընթացքում, եթե ճեղքվել է 45 մոլեկուլ գլյուկոզ:**

**17. ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը պարունակում է 880 գուանինային և 1120 թիմինային նուկլեոտիդ: Որոշել այդ տեղամասի երկարությունը՝ նկատի ունենալով, որ ԴՆԹ-ի մեկ պարույրի երկարությունը 3.4նմ է:**

**18. Քլորոֆիլ a-ի մեկ մոլեկուլն ըստ զանգվածի պարունակում է 2.7% Mg: Որքա՞ն է քլորոֆիլի մոլեկուլային զանգվածը, եթե մագնեզիումի ատոմական զանգվածը 24.3 է:**

**19. Արագ վազքի համար օրգանիզմը մեկ ժամվա ընթացքում ծախսում է 2100,6 կՋ էներգիա: Քանի՞ գրամ ճարպ է անհրաժեշտ 20ր վազքի համար պահանջվող էներգիան ապահովելու համար, եթե ՕԳԳ=50%**

**20. Քանի՞ կԴա է բազմաշաքարի մոլեկուլային զանգվածը, որը կազմված է գլյուկոզի 111 մնացորդներից:**